

ՆՈՐՅՈՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՔՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՇԱՐՊԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գրքերի համար	արեւմտյան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայից	արեւմտյան	60
»	վեցամսեայ	35

ԱՐՏԱՍՏՐԱԿԱՆ ՇԱՐՊԸ		
Տարեկան	Ֆրանկ	48
Վեցամսեայ	»	10

ՈՌԹՈՑ ԵՒ ԿՈՂՈՍԻ ՇԱՐՊԸ		
Տարեկան	րուբլի	7
Վեցամսեայ	»	4

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ԿԱՆԵՎԻ
ԵՒ ԲՂԹԱՏԱՐԻ ԵՄԻՔԸ
Թերթին վարչութեան վրայ է

ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱ ԿԱՐ ՈՒՆԻ ԲՂԹԱՏԱՐԻ
ՊԵՏԵ ԵՒ ՈՒՂՂԵՆ ԿՈՒ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ ԲՈՒԳՐԻ
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռապրիներն եւ չեն դարձուիր,
ԱՐՏՈՒՍՏՐԱԿԱՆ Ժ. ՄԻՆԵՐԷ

ՇԱՐՊ 16/29 ԴԵԿՏ. 1900

ՔԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 58

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԷՆ
ՍԿՍԵՈՒ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԿՆԻՔԸ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՍՅՈՒ-
ՑԻՉ ՏԻՄ ՍՄԲԱՏ ՎՍՓԱՉԵԱՆԻ ՍՏԱ-
ՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի
ԸՆԿԱՎԱԳՐՈՒՆԵՐՆ ԱՆՎԱԽԵՐ ԿԸ ՆԿԱՏ-
ՈՒԻՆ:

ԻՆՉՈՒ ԵԿԵՂԵՑԻ ՉԵՆՔԻ ԵՐԹԱՐ

Այն օրը որ մեր մէջ եկեղեցիները ոչ թէ
միայն իբր ազօթատեղի, այլ պիտի ծառայու-
ին նաև իբր բարոյագիտական գոտարան,
պիտի տեսնենք որ ժողովուրդը երանգուն պի-
տի դիմէ հոն ամէն կերպով:

Այս առթիւ արգիւ ընթացողաց ուշադրու-
թեանը կը յանձնարարեմք այն ազգու բա-
րոզը որ խօսած էր ասկէց առջև Աղէք-
սանդրոյ մէջ Արժ. Տ. Սրապիան բաճա-
նայ Սամուէլեան, բացատրելով ժողովուրդին
եկեղեցի չերթալու պատճառները, զոր ամ-
բողջութեամբ կը հրատարակեմք հոս, ինչպէս
որ արդէն առաջուց խօստացած կինք:

Սերերի եղբայրներ եւ բոյրեր,
Ազգբանդակացի Հայ ժողովուրդը
ունի շատ տեսակ կրթարաններ, բայց
եւ մտադիր եմ այս բեմէն հակիրճ
կերպով խօսիլ եկեղեցի-կրթարանի
և ուսումնարանի վրայ:

Ո՛վ լսած չէ մեր, հոգևորականնե-
րուս, անդադար այն գանգատները,
որոցմով սովորութիւն ունինք մեր
գծօնհատութիւնը արտայայտելու այն
առիթով թէ՛ ժողովուրդները եկեղե-
ցիէ շատ պարզած են, չեն դար եկե-
ղեցի ազօթելու, ժամերգութիւնները
լսելու:

Ո՛վ կուզէ թո՛ղ մեզադրէ ժողո-
վուրդները եկեղեցիները շինելուն մէջ,
սակայն եւ չեմ մեղադրեր, քանի որ
մենք, հոգևորականներս եկեղեցին
չենք կարող դարձնել եկեղեցի-կրթ-
արանի:

Իմ խորին համոզմունքս սա է, որ
եկեղեցին պէտք է թէ՛ ձեռքի և թէ՛ ձեռ
որդիքների համար դառնայ կրթա-
րան, ինչպէս ձեռք գաւազների համար
կրթարան է ուսումնարանը, ուրտեղ
ձեռք գաւազները ամեն օր կը հաւաք-

ուին ու վարժարաններէ զանազան
գիտութիւնների մասին գասեր կա-
նեն ու կը կրթուին բարոյապէս, մը-
տաւորապէս և մարմնապէս:

Ինչպէ՞ք ձեռք ուսումնարանի ուսուցչա-
կան խմբի բարձր քաղաքականութիւնէն
կտրուած է ձեռք գաւազների յառաջիկ-
մութիւնը այնպէս ալ եկեղեցի-կրթա-
րան եկեղեցիներէ բարոյական յառաջա-
գիտութիւնը կտրուած է մեր, հոգևորա-
կաններս, բարոյական հրամայելէ:

Եթէ մենք կարող ենք ձեռք բարձ-
րագէտ կրթիւն այս սուրբ տաճարին
մէջ և այդ մեր բարոյական հմուտ-
ութիւնը ամեն օր և կամ կերպովէ կե-
րպակի գործ կ'ընենք այստեղ զիւրբ-
բընելի ոճով կամ կամ քարոզ խօ-
սելով, այն ժամանակ ձեռք եկեղեցի
զաւր թէ աւելի բազմաթիւ մար կ'ը-
նի և թէ կանոնաւոր:

Եթէ ձեռք գաւազները ուսումնարան
գնալով ոչինչ չի սովորելին, հաւա-
տացած եղէք, որ նոքա եւ ձեռք նման
հետզհետէ կ'ազդարարին ուսումնարան
դնալէ՛ անտրով թէ՛ «Ինչ գնանք, երբ
բան չենք սովորեր»:

Եկեղեցւոյ մէջ կ'զործածուի գը-
րաբար լեզու, որն զժուար հասկնալի
է թէ ձեռք և թէ մեղ համար:

Եկեղեցւոյ բեմէն դաստիարակու-
առարկան գլխաւորապէս ֆրիտտոսի
բարոյագիտութիւնը պէ՛տք է լինի...:

Այն հոգևորականը, որն ֆրիտտո-
սի բարոյագիտութիւնը հիմնաւորա-
պէս ուսումնասիրած է Ս. Աւետարա-
նի մէջէն, համարձակ կարող է այս
սուրբ բեմէն ձեռք համար բարոյա-
գիտական դասեր կամ քարոզներ խօ-
սել ու ձեռք բարոյապէս կրթել:

Քանի որ եկեղեցւոյ մէջ ժողովրդի
համար անհասկանալի լեզուով կ'կար-
դացուին բարոյագիտութեան դասերը,
եկեղեցի եկողների թիւը հետզհետէ
այնքան պակասելու է, որ մենք, հո-
գևորականներս, մի և նոյն ժամանակ
թէ՛ ժողովրդի տեղ բռնելու ենք և
թէ՛ կարդացողների դեր կատարելու
ենք:

Եկեղեցիների փառահեղութիւնը,
նոյա զգեստների, օրհնուած անթի-
ների ծանրազին լինելը և երգեցողու-
թեան կանոնաւոր սնգամ լինելը չեն
կարող հիմնաւորապէս եկեղեցիների
գաւառիկները առաջ առնել...:

Մինչդեռ բարոյագիտութեան ճըշ-
մարիտ ուսուցիչները եկեղեցիների
այդ լծանդուար դատարկման առա-
ջն, շուտով կարող են առնել. բա-
ւական է՝ որ ժողովուրդը այդ գիտու-
թեան վրայ գասեր լսելով անկաս-
կած կերպով զգոյ իւր յառաջադի-
մութիւնը բարոյագիտութեան մէջ,
այսինքն այն գիտութեան մէջ, որն
կ'համարուի և է գիտութիւնների մայր:

Բարոյագիտութիւնը մեղ կը սովո-
րեցնէ մտածել, խօսիլ և գործել ընդ-
հանրութեան վերաբերեալ քարի քա-
նեկ...:

Ո՛վ որ ինքզինքը այս ամենի մէջ
պատրաստ կ'ըլլայ, թո՛ղ նա թո՛ղ տայ
իրեն այս սուրբ բեմէն ձեռք հետ խօ-
սելու իրեն ուսուցիչ բարոյագիտու-
թեան:

Բայց չէ՛ որ մարդս պէտք է իւր
բարոյական կրթութեան հետ առաջ
տանէ զուգիթացաբար և իւր մտաւո-
րական և մարմնական զարգացումը:

Ձեռք սրգիքը այդ տեսակ կրթա-
րան ունին, դա ուսումնարանն է, ուր-
տեղ բացի բարոյագիտութիւնէ կա-
ւանգալին ևս ուրիշ գիտութիւններ:

Ինչո՞ւ համար ձեռք ևս չունենալ այդ
տեսակ կրթարան, որ ձեռք մտքերն ալ
կարող լինելին հետզհետէ կրթուի:

Չէ՛ որ ձեռք մէջը կան բարձր կրթ-
ութիւնով մարդիկ. թո՛ղ նոքա յան-
ձն առնեն ձեռք դասախօսելու կեանքի
մէջ զործածող գիտութիւնները:

Որքան ձեռք համար օգտակար կ'ը-
նի բժշկի, զիւրաւանասի, փաստա-
բանի, սոսմարակալի և ուրիշ մասնա-
գէտների դասախօսութիւնները:

Որովհետեւ այս եկրին մէջ բացա-
ռիկ ազատութիւն խզի, կրօնքի,
խօսքի և մամուլի կ'տիրէ, ուստի նը-
րանօք չօգտուիլ և ըստ այնմ չ'գոր-
ծելը աննշարիլ յանցանք կ'համարուի:

Ուրեմն, շուտով ժողովուրդէք և բա-
ցէք ձեռք համար մի լսարան, որի մէջ
չնորհիւ ձեռք զարգացած եղբայրների
կտորդանաք զարգանալ հետզհետէ
բարոյական, մտաւորական զարգաց-
ման մէջ յետ մնացած անձինք:

Մի քանի խօսք ալ կուզեմ ասել
ձեռք ուսումնարանի մասին:

Ուսուցչացմէ մի քանիսի դասա-
խօսութիւններին ներկայ լինելով, կա-
րողացայ քիչ շատ հասկնալ թէ ու-
սումնարանի ուսուցչական խումբը
իւր յարգելի Տնօրէն ուսուցիչով

կ'ջանայ ուսումնարանի յառաջադի-
մութեան:

Ուսուցչական ասպարիզի վրայ իմ
ՁՑ տարւոյ ծառայութիւնը համար-
ձակութիւն կ'տայ ինձ ասելու հա-
մարձակօրէն թէ՛ որ և է ուսումնա-
րանի արագաբայլ յառաջիկմութիւնը
կախում ունի արժանաւոր ուսուցչա-
կան խմբի և Տնօրէնի ազատ գործու-
նէութենէ:

Եթէ Տնօրէնը կուզէ, որ իրեն յանձ-
նուած արժանաւոր ուսուցչական խում-
բը ժեռ դարկ կարողանայ տալ աշա-
կերաց բարոյական, մտաւորական
և մարմնական կանոնաւոր զարգաց-
ման, պէտք է իւրաքանչիւր ուսուցչին
տալ կատարեալ ազատութիւն իւր
գործունէութեան շրջանի մէջ: Ուսու-
ցիչը իւր գասարանի մէջ՝ գասաւան-
դութեան ժամանակ՝ տէր և ուսուցա-
նող է: Տնօրէնը ուսուցչի գործած սը-
խալները ուղղել պարտական է առանձ-
նապէս և կամ՝ մանկավարժական ժո-
ղովի առաջիկայ նստի ժամանակ: Ար-
ժանաւոր ուսուցիչը իւր գործած գի-
տական սխալները շուտով կ'մտնէ և
զբոյժ կ'ընի նոյն կրկնիէ:

Մի և նոյն կերպ պէտք է վարուի և
վարչական մարմինը, որմէ կախում
ունի Տնօրէնի նշանակուիլը:

Եթէ հոգաբարձութիւնը և կամ
թաղական խորհուրդը կուզէ, որ իրեն
յանձնուած ուսումնարանի աշակերտաց
մէջ կանոնաւոր բարոյական մտաւո-
րական և մարմնական զարգացում
լինի, պէտք է տեսչական գործունէ-
ութեան շրջանի մէջ Տնօրէնին տալ
կատարեալ ազատութիւն գործելու
յօգուտ ուսումնարանի:

Հոգաբարձութիւնը և կամ թաղա-
կան խորհուրդը եթէ նկատէ Տնօրէ-
նի կողմանէ գիտական և կամ ման-
կավարժական որ և է սխալ, այն ժա-
մանակ սխալը ուղղել առանձնապէս
և կամ՝ դիւանի նստի ժամանակ ան-
հրատեչտ է յօգուտ ուսումնարանի:
Արժանաւոր Տնօրէնը իւր սխալը շու-
տով կ'ձանձնայ և կուղղէ:

Տեղոյս Հայ մանկեւոցին յառա-
ջադիմութեան սուրբ գործին յաջո-
ղութիւն ցանկալով, կ'մաղթեմ պատ-
կան լի թող-խորհրդոյն և ուսուցչա-
կան խմբին կատարեալ համերայնու-
թիւն:

ՍՐ. Ք. ՍՍԱՐՈՒԷԼԵԱՆ

Ծ Ա Ն Օ Թ Դ Է Մ Ք Ե Ր

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՂԲԱՐԸ

Գահընկեց մը:

Կուրծքին վրայ սակեզած կոճակներ, ուսկի գոտին մէջը, սրունքներն ի վար յուսահատօրէն կախկրտուող սուրբ մը, արծաթ զլեռով հաստ աստ մը ի ձեռին, ազգային իշխանութիւնը կը ներկայացնէր ան՝ առաջնորդական կարգերու վրայ, յուզարկաւորութիւններու առջև և եկեղեցոյ դրան կամարին տակ:

Պարզ բարապան մը որ վեհապետի հովեր կաններ իր պաշտօնին կիրարկութեան մէջ: Քաջաւածքին մէջ այնքան ուճ և խոսակցութեանը մէջ այնքան վերին նայող բան մը կար որ Պէնի Սուրբի ստահակները լեռն եօթնէրորդ անունով մկրտած էին այդ բարի մարդուը:

Բարձրահասակ, յաղթանգամ, կործր նայուածքով, խոշոր, ուրրուն պիտերով, հսկայի քայլերով, թանձր, սառնեցնող ձայնով բարապաններու տեսակին չէր պատկանէր ան. ընդհակառակը ազգուն մարմին մը. միջակ հասակ մը, կըրտ քայլեր, բան մը չըսող զէմք մը, աննշմարելի պիտեր, քոփտի նայող աչքեր, և աղերսող ձայն մը ֆիզիքական պաշարը կը կազմէին խաչատուր աղբոր որուն բարոյական յատկութիւնները աւելի հարուստ չէին:

Հակառակ սակայն այդքան աննշան երեւոյթին՝ ազգային արծանապատուութիւնը բան մը չէր կորսնցուցած անոր երեսին:

Փոխանակ քաջ, կէս-վայրենի բարապան մը ըլլալու՝ բարի, զարարող, կակող խաղաղ մը ըլլալով բաւականացած էր:

Տարիներով և տարիներով այդ արծաթապատ ասան ճօճել գիտցած էր ասանց մեծ գովհուրութիւններ յարուցանելու իր շուրջը:

Թարր-սեթք բարապան մըն էր վերջապէս մեր խաչատուր սիրաբար:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐ ՏԵ ՍՕՔԱՍԱՆ

ՍԻՄՈՆԻՆ ՀԱՅՐԻԿԸ

Ճիշդ կէս օր էր: Գարոցին դուռը բացուեցաւ, և սղաքը գերար հրմշտկելով դուրս ելան: Բայց, փոխանակ ամեն օրուան պէս, շուտ մը ցրուելով ճաշէ երթալու, գարոցին քանի մը քայլ անդին գացին, խուփ խուփ իրարու ըով հաւաքուեցան ու սկսան փոփախալ:

Պրանշօզի տղան՝ Սիմոնին առաջին անգամ գարոց գնացած օրն էր՝ այդ օրը:

Տղոց ամենուն ալ տունը կը խօսէին Պրանշօզի վրայ. և, թէպէտ հրապարակաւ կը պատուէին զանի, բայց մայրերը արհամարհանքի պէս բան մ'ունէին անոր դէմ. ինչ որ տղաքն ալ օրինակած էին, ասանց պատճառը գիտնալու:

Գալով Սիմոնին, այդ լակոտները չէին ճանչնար զինք, որովհետև դուրս չ'էր ելնէր, գիւղին փողոցները կամ գետեզերքները չ'էր վազուրուէր անոնց հետ: Չ'էր ալ սիրէր զանոնք: Սիմոնին գալը մեծ դարմանը ու ուրախութիւն պատճառեց անոնց. ամենքն ալ իրարու ականջն ի վար

Միայն առիւծ կը դառնար չորեքշաբթիէ չորեքշաբթի: Այդ օրը՝ կոճակները աւելի փայլուն էին և պիտերը աւելի սև:

Քաղաքական ժողովը երբ չորեքշաբթի օրերը նիստ կընէր, մեծ սրահին մէջ լեռն է. սանդուղին զուգը կեցած, ժողովատեղիին մուտքը կարգիլէր մահկանացու ազգայնոց:

Ան մեր գիտցած խաչատուր աղբորը չէր այլևս:

Պուրջ-Տօկի արամադրութիւններով կընդունէր զձեզ. անանկ խորհրդաւոր, անանկ պատկառու և անանկ աչալուրջ կերպով կը պաշտպանէր քաղաքական ժողովին դուռը որ կարծես ներսը՝ մեր աղաները՝ ֆրակիլըր Չէմըրլէկին հետ կը հաշտեցնէր կոր . . .

Եւ նոյն այդ քաղաքական ժողովը է որ այս մեր բարապանը իր պատուազանէն վար կաննէ և կը խլէ ձեռքէն սև, երկայն, արծաթապատ ասան:

Գահընկեցութիւն մը պարզապէս որուն զանուութիւնը ամբողջու համար ամսական յիսուն զրուշ կը յատկացնէ մարդու մը որ ասկէջ շարթ մը առաջ ոսկի կոճակներով կը պարտէր:

Մեր Աղբային վարչութիւնը ֆրանսագէտ Առաջնորդի մը և ֆրանսագէտ բարապանի մը պէտքը զգալով, Այվազեան Սրբազան, հոս կանչած և խաչատուր աղբորը դուրս նետած է:

Ահա ինչու համար մեր նախկին բարապանը զօտին քակելով անձնատուր եղած է ուրիշի մը, անպատեհութեան մը՝ որ մէյ մը բարապաններու յատուկէ մէյ մալ. . . կիներու:

— Ամիսը յիսուն զրուշ քիչ չէ՛, կը հարցնեմ իրեն անցեալ օր:

— Ինչ ընենք, աղաս, կը պատասխանէ ինձի: Պահաբարթ ալ սխրկիլուն ըրին նէ, մինակ երկու վարտիք ունի եղբր:

Յ. ԱՎԻՍՏ

ՅԱՌԱՋԻԿԱՅ ԹՈՒՌՈՎ
ՄՈՒԹԵՂԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ
Շարունակութիւն 56 թիւն

— « Գիտէք . . . Սիմոնը . . . հայրիկ չունի . . . Սիմոնը . . . » խօսքը կը փոփոխային, զոր տասնը չորս — տասնը հինգ տարեկան սրիկայ մը ըսած էր, և որ այդ մասին զեռ շատ բան գիտեմ ըսել կուզէր ձեզրով մը:

Պրանշօզին տղան ալ զպրօցի դանկն դուրս ելաւ:

Եթեթ—ուրը տարեկան հաղիւ կար: Գունատ էր քիչ մը. վրան զուգը շատ մաքուր, վախկոտ ու զրեթէ կամկոր:

Սիմոն տուն՝ իր մօր ըով դառնալու ատեն հոն հաւաքուող ընկերները, միշտ իրարու հետ փոփոխալով ու գէշ գէշ անոր երեսը նայելով, շրջապատեցին զինք կամաց կամաց և վերջապէս լաւ մը մէջերին տոնին: Սիմոն՝ զարմացած, շփոթած՝ հոն, անոնց մէջ, մոմի պէս կեցած էր — չ'էր գիտէր թէ ինչ պիտի բերէին զիտուն:

Բայց լուրը բերող սրիկան, ըրածովը հպարտ

— Անունդ ինչ է հարցուց անոր:
— Սիմոն, պատասխանեց նա:

— Մականունդ ինչ է, յարեց ուրիշ մը:
— « Սիմոն » կրկնեց տղան, բողբոջին շփոթած:

— Մինակ Սիմոն զետեղ ինչ կը հասկընաս, մականուն մ'ալ պէտք է որ ունենաս, պոռաց լուրը բերող սրիկան:

ՄՈՐՏ ՔՐՕՍԸՐ Ի ԽԱՐԹՈՒՄ

Լորտ Գրօմըր որ Սուտան այցելելու գացած էր, Խարթումի մէջ հետեւեալ բանախօսութիւնը ըրած է անցեալ օր, զոր կամփոքները քաղելով Ռէսթէրի 24 Դեկտ. հետագրէն:

Իմ խորին շնորհակալութիւններս կը յայտնեմ այն անհուն համակրական ցոյցերուն համար, որով հաճեցաք դուք, վսեմ. չէ. յիսերգ և մեծատրներդ, պատուելի զիս մաղթելով բարի զալուստ ինձ:

Երկու տարի առաջ իմ Սուտան այցելութեանս միջոցին, ձեզ բացատրած էի թէ՛ ապագային դուք պիտի կառավարուէիք Անգղիոյ Թագուհիէն և Եգիպտոսի Խարթէն:

Այժմ հրաման ստացած եմ վեհ. Թագուհիէն — որ ձեզ կրօնակից միլիոնաւորներու վրայ կ'իշխէ — ձեզ հաղորդելու համար այն համակրանքն զոր կը տածէ ձեր բարօրութեանը համար. բաց աստի Ն. վեհ. բարեհաճած է շնորհել բրիտանական չքանչաններէն մին Սուտանի ամենէն նշանաւոր Միւսլիմանի մը՝ որուն աւունը արդէն ծանուցուեցաւ Սուտանի վսեմ կուսակալի միջոցաւ առ Նորին վեհաբարութիւն:

Մեծ յառաջդիմութեան քայլեր առնուած են, իմ վերջին այցելութեանս ի վեր. յ'անչափս զոչ եմ տեսելով որ ձեր կրօնը և ձեր կրօնական աւանդութիւնները նոյնութեամբ յարգուած են ինչպէս որ արդէն ձեզ ապահովուցած էի: Դատարաններ կազմուեցան արգարութիւնը վըճուելու համար. խիտ չափաւոր տուրքեր հաստատուեցան: Երկաթուղին մինչև խարթում շինուեցաւ:

Արդարեւ կը յուսամ թէ ձեզ բաւական վստահութիւն կրցած են ներ-

շնչել գործունէութիւնը ձեր նոր վարիչներուն. — Անգղիացի կամ Եգիպտացի անանց խտրութեան — որոնք կատարեալ համեալ խտրութեամբ կ'աշխատին երկրին բարօրութեանը համար: Ասոնք բազմաթիւ իրենց նախորդներուն, ոչ միայն անհամեմատաբար գերազոյն կարողութեան տէր են այլ նաև արդարադատ ոգով ներշնչուած անձեր են՝ որոնք պիտին վարձատրել բովանդակ ժողովուրդ մը. այս առաւելութիւններէն և ոչ մին գոյութիւն ունէր, աչքովի ներու բունպետութեան օրով:

Գիտեմ թէ զեռ շատ բան կայ ընելիք, բայց փոյթ չէ թէ քիչ մը ուշանան անոնք:

Տ'որչափ նիւթական միջոցները բազմապատկին, այնքան երկիրը կը ծաղկի: Երկրին ամենակարևոր պետքերէն մին է, հաղորդակցութեանց գիծերու ընդլայնուլը:

Բարեկարգութիւնները շատ փափաքելի են թէև, բայց միջոցները պէտք է ներեն, և Սուտանի բեռը չենք կրնար Եգիպտացիին բեռնել, մանաւանդ որ Սուտանցիին տուրքերն պարագային համեմատ թեթեւ պիտի ըլլան:

Սուտանը ընդարձակելու զարգացնելու համար նոր երկաթուղիներ շինելը և արդէն եղածները բարեկարգ պահելը շատ անհրաժեշտ է. ինչ որ շատ լաւ գիտեմ թէ ահագին գումարներ կը պահանջէ:

Կ'անցնիմ ուրիշ խնդրոյ մը: Տեղացիք, կ'ըսեն ինձ, կը գանգատին թէ կարևորագոյն պաշտօնները Երոպացիներու կը տրուին: Յետ այսու պէտք չ'կայ շատ օտար պաշտօնեաներու, և մասամբ իրաւացի են այս գանգատները:

Չ'իւտրական պաշտօնեաները գովելի կերպով կատարեցին իրենց

տանի, կարծես պէտք կ'զգային ջանջախել այդ խողճ տղան, ինչպէս հաւնոցի մը մէջ՝ հաւերը բողբոջին մեղսել կ'աշխատին երբ իրենցմէ մէկը վիրաւորուած է: Սիմոն իր իր աչքին հանդիպած մէկ պղտիկ դրացին կանչեց, որ իրեն պէս սրբեկայրի մը գաւակն էր, որ՝ մօրկանը հետ կ'ապրէր միս մինակ:

— Դուս ալ, ինձի պէս, հայրիկ չ'ունի չէ՛, ըսաւ Սիմոն:

— Ինչպէս չէ՛, ունի՛մ, պատասխանեց նորեկը:

— Ո՛ր է ապա, ըսաւ Սիմոն:

— Մեռած է, գերեզմանատունն է, պատասխանեց տղան սեզ հպարտութեամբ մը: Անասկներուն մէջ հաւանութեան վըսփոռը մ'անցաւ, և կարծես թէ անոր հօր մեռած ըլլալը իրաւունք կուտար միւս հայր չ'ունեցող տղան ջանջախելու: Եւ այս անարգ տղաքները, որոնց հայրերը, մեծաւ մասամբ, չար, գիտով, աւագակ և դատան մարդիկ էին, զիտար հրմշտկելով աւելի իրար կպեր, ու, կարծես թէ իրենք հարազատ անհարազատը ճշնելով մեղսել կ'ուզէին:

Տղայ մը որ Սիմոնի զիմացը կեցեր էր, յանկարծ խորամանկաբար անոր ընդուն զուրս քաշեց ու

պաշտօնը, բայց օգնականներ պէտք են անոնց. և ասոր համար է որ շատ մը անգղիացիներ պաշտօնի կանչուեցան: Այս վերջինները արդի մոնտիրներուն հրամանին տակ պիտի մնան, և կը յուսամ թէ՛ Սուսանի ապագայ քաղաքական վարչութեան հօգին պիտի ըլլան անոնք:

Ջրբարձրական նոր երկրաչափներ ալ պաշտօնի պիտի կանչուին, որոնց կարողութեան վրայ կարելի է կասկածիլ: Մեծ ծառայութիւններ մատուցեր են անոնք Եգիպտոսի, ու պիտի մատուցանեն նաև Սուսանին, փարահ եւ ատոր:

Ուրիշ մանրամասնութեանց մէջ չը պիտի մտնեմ: Միայն թէ այսօր ձեզ հոս տեսնելու շատ գոհ եմ. և վրաստահ եմ որ ամեն ջանքի գործ պիտի դնէք թեթեւեղութեամբ Սըր Ռէյնալտ Ռիկլիքի գործերը, որ կը ներկայացնէ, Ն. Վ. Թագուհին, և Ն. Բ. Խտիվը, և անոնց ստորագաս պաշտօնական մարմինը, ձեր երկիրը բարոյապէս ու նիւթապէս զարգացնելու համար:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Աղէքսանդրիոյ մեր մասնաւոր թըղթակիցը հետեւեալը կը գրէ մեզ՝ Գերապատիւ Յովսէփ Եպիսկոպոս Այվազեանի Աղէքսանդրիա հասնելուն առթիւ եղած ընդունելութեան մասին: Եգիպտոսի Առաջնորդ Գեր. Յովսէփ Եպիսկոպոս Այվազեան կիրակի գիշեր ոչ ատեն Ռուսական Ձիւնագօծ շնորհաւոր Աղէքսանդրիա հասաւ: Ժամանակակից անյարմար ըլլալուն, Սըրբազանը գիշերը շոգենալին մէջ անցուց:

Սըրբազան Առաջնորդը արժանաւակցել կերպով ընդունելու համար Աղէքսանդրիոյ Ազգային Թաղական Խոր-

հորգը՝ ըստ սովորութեան՝ տեղւոյս կուսակալութեան և Հայ գաղութի անդամներուն հրաւիրագրիւնը ուղղելով, Սըրբազանին ընդունելութիւնը սրոշած էր երկուշաբթի առաւօտեան ժամը 40ին:

Ժողովրդեան հոծ բազմութիւն մը առաւօտուն կանուխէն խնուած էր մաքսատան քարափին վրայ, որի մօտ կը գտնուէր Առաջնորդը բերող Ռուսական շոգենարը:

Ն. Գերապատիւ Ռիկլիքը՝ ուղղակի շոգենար գիմար որբու համար որոշեալ ժամուն հասան գէտի քարափ՝ յանուն Հայ գաղութին՝ Վսեմ. Կարապետ պէյ Ռէիզեան, Տիար Զարեհ Սըրվալը, Թաղական Խորհրդայ անդամները, Աղգալին վարժարանի ուսուցչական մարմինը, և ազգային ընկերութեանց բոլոր ներկայացուցիչները:

Յանուն Եգիպտական կառավարութեան Սըրբազանին բարի գալուստ մաղթելու համար յատկապէս շոգենար շրջուած էր Վսեմ. Շուքրի պէյ, առաջին օգնական Աղէքսանդրիոյ կուսակալութեան. ներկայ էին նաև Եգիպտոսի Առաջնորդական նախկին Տեղապահ Արթ. Տ. Մամբրէ քահանայ և Դուանապետ Տիար Նապարէթ Ալազարմ, որոնք յատկապէս պատգամաւոր եկած էին Գահիրէէն յանուն Ազգային Վարչութեան:

Սըրբազանը բոլոր գիմար որոշները շոգենալին մէջ ընդունելէ վերջ՝ ուղղակի առաջնորդուեցաւ Մաքսատան քարափը՝ ուր ստանդերկու ստիկանները յարգանք օղջանեցին Ն. Սըրբազանութեան գալուստը:

Յետ այնու Սըրբազանը հրաւիրուեցաւ Էրեն համար յատկապէս բերուած շանսօի մը մէջ, ուր՝ տեղ առաւ նաև Վսեմ. Կարապետ Պէյ Ռէիզեան: Սըրբազանին կը հետեւէին երկրորդ կառքի մը մէջ Աղէքսանդրիոյ կուսակալութեան առաջին օգնականը և Տ. Զարեհ Սըրվալը, իսկ երրորդ կառքի մը մէջ Արթ. Տէր Մամբրէ քահանայ և Տ. Նազարէթ Ալազարմ և հայ գաղութին երեսները և ներկայացուցիչները:

Սըրբազանին առջևէն և ետևէն կեր-

թախին եօթը հեծկազոր ոստիկաններ: Թափօրը Առաջնորդարան հասնելուն պէս, Սըրբազանը առաջնորդուեցաւ Եկեղեցի, ուր հակերճ և ազգու թարոզ մը խօսելով բացատրեց թէ ինչ պատճառներու համար ուշացուցած էր իր գալուստը:

«Եգիպտոսի համար, ըստ Սըրբազանը, կուսակցական երկիր մ'է կրեկին ինձ. Պօլիս այնքան արձագանգ գտած էր այդ ձայնը որ մինչև իսկ վայրկեան մը վարանեցայ գալ պաշտօնի գլուխ անցնելու, բայց նկատելով որ մենք հովիքս պատրաստուած ենք ազգին ծառայելու, պէտք չէ խորշիք կարգ մը գիտարութիւնները որոնց բախել կարելի է ամեն գործի մէջ. իրօք եթէ գոյութիւն ունին այդ կուսակցութիւնները, առաջնորդին գործունէութենէն կախեալ է անոնց ամենքն ալ գործածել, և թող չի տալ որ ծայրայեղութեան դիմեն:»

Յետ աւարտ արարողութեան, Սըրբազանը առաջնորդուեցաւ Առաջնորդարանի սրահը ուր կարգաւ ներկայացուեցան հայ գաղութի ներկայ բոլոր անդամները: Երգեր երգուեցան և ճառատ արտասանուեցան, Սըրբազանը կը պատասխանէր հակերճօրէն:

Յերեկէն վերջը Սըրբազանը՝ ընկերակցութեամբ Վսեմ. Կարապետ պէյ Ռէիզեանի պաշտօնական այցելութիւն առաւ Աղէքսանդրիոյ Վսեմ. կուսակալին և թաղապետութեան նախագահ Վսեմ. Շարուր պէյի, որ իր հայաստիւթիւմը ծանօթ է: Սըրբազանը ապա այցելեց Վսեմ. Կարապետ պէյ Ռէիզեանի բնակարանը ուր Սըրբազանին ի պատիւ հացկերոյթ տրուեցաւ: Չը մոռնանք յիշելու թէ Վսեմ. Կարապետ պէյ Ռէիզեան յանուն Վսեմ. Պօլիս փաշա Նուպարի նաև բարի գալուստ մաղթեց Սըրբազանին, որու առթիւ Վսեմ. Պօլիս փաշայի կողմէն մասնաւոր հեռագիր մը ստացած էր:

Սըրբազանէն խնդրուեցաւ որ քանի մ'օր տեղի մնայ Աղէքսանդրիա, բայց ցու յայտնեց չի կարենալ երկար մընալուն. և վերջին պահուն որ պիտի մեկնէր Գահիրէ՝ աչքէ անցուց բարեխառակ Նուպար փաշայի դամբարանի շինութեան աշխատութիւն:

Ներքէն Տարակոյս չի կայ թէ գերազանցապէս հոյակապ գործ մը պիտի ըլլայ Եգիպտոսի համար, Նուպար փաշայի շինումը: Երևակայեցէք Սկոթլանդական կուսակցութի քարէ շինուած յիշատակարանի մը մէջ, իր նկուղին վրայ կանգնած պիտի տեսնէք արձան մը մարմարինէ՝ որ կը ներկայացնէ Նուպար փաշան՝ նստած աթոռի մը վրայ՝ սովորական լեզու գլուխը:

Սըրբազանը խորին տպաւորութեան մը ներքէն կատուեցաւ այդ վայրէն, վերջնականապէս հրաժեշտ աւալու համար Աղէքսանդրիացիներուն:

Սըրբազանը մեկնեցաւ Աղէքսանդրիայէն և վերջին յարգանք մը ևս ըլլալով՝ Գեր. Վահրամ վարդապետ մինչև Գահիրէ ընկերացաւ Սըրբազանին:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

— Հինգշաբթի օր Վ. Վ. Տիգրան փաշա և Պօլիս փաշա Նուպար Ազգային Առաջնորդարան այցելութեան գացին Սըրբազան Առաջնորդին:

Ն. Գերապատիւ Ռիկլիքը փոխազարձ այցելութիւն տուաւ Վսեմաշուք փաշաներուն:

— Երէկ ուրբաթ Սըրբազան Առաջնորդը՝ Գերապետ Ժողովոյ և Հոգաբարձութեան մի քանի անդամներուն հետ տեսակցեցաւ:

Յերեկէն վերջը այցելեց Գալստեան Ազգային երկսեռ վարժարանը որու գիրքէն և շէքէն խիստ զգոհ մնաց:

Վարժարանին տեսուչ Արթ. Տ. Սամուէլեանի գործունէութիւնը քաջաբերով մաղթեց ազգային մանկապետ յառաջիմութիւն:

— ԳԱԻԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎ — Առաջիկայ չորեքշաբթի կէս օրէն վերջ, Սըրբազան Առաջնորդին զատուեցաւ առթիւ, Գաւառական Ընդհ. Ժողով պետի գումարուի, բնականաբար ընդ նախագահութեամբ Գեր. Առաջնորդին, օրակարգ ունենալով: «Խօսք Ս. Առաջնորդին առ Ժողովը:»

— Հայրիկ չ'ունի, հայրիկ չ'ունի, պոռայ: Սիմոն երկու ձեռքերովը անոր մագերէն բանց ու մէկ կողմէն այտերը սկսաւ անգթօրէն խածնել և միևնոյն ատեն կիցերովը անոր սրունքներուն կը զարնէր անգագար:

Տղոց մէջ ահագին իրաբանցում մը տիրեց յանկարծ: Երկու կուռններ բաժնեցին իրարմէ. ձեռք Սիմոնը կ'երաւ, վրան գլուխը պատուեցին, արիւնեցին, գետին տապալեցին զինքը, ու այդ շարածիծիները՝ իրենց ուրախութենէն սկսան ծափահարել: Սիմոն ինկած տեղէն ոտքի ելնելու և մեքենաբար ձեռքովը տափառին վրայ եղած փոշին մաքրելու՝ ատեն

— Գնա՛, հայրիկիդ ըսէ՛, պոռայ իրեն՝ տղուն՝ մէկը:

Այն ատեն Սիմոնին գլուխն ի վար տաք ջուր մ'իջաւ կարծես: Իրմէ զօրաւոր էին անոնք, ձեռք մէկ զինք. ու ինք՝ անոնց չ'էր կրնար պատասխանել, որովհետև կ'զգար թէ հայր չ'ունէր: Հպարտութեամբ քստի մը վայրկեան կրցաւ համբերել, չ'ըսեցաւ: Բայց ալ չ'կրցաւ դիմանալ, շունչը կտրեցաւ և սկսաւ առանց ձայնի հեծեծելով լալ. հեծկուլտուք մը որ շարունակ կը ցնցէր զինք:

Կատաղի ուրախութիւն մը բռնեց այն ատեն իր թշնամիները, և, բնականաբար, ինչպէս որ վայրենիները կ'ընեն իրենց զուար-

թութեան ատեն, անոնք իրարու ձեռք բռնեցին ու սկսան շորջը պարել, յանկերգի մը պէս

— Հայրիկ չ'ունի, հայրիկ չ'ունի, կրկնելով: Սիմոն սակայն, ալ չ'էր հեծկուտար: Մոլեղնեցաւ: Ոտքին տակի քարերը ժողկեց ու բոլոր զօրութեամբ բոլորաբար կեցողներուն վրայ նետեց: Երկու երեքին դպաւ որ պոռալով փախան: Սիմոն այնպէս սոսկալի կերպարանք մ'ունէր որ միանքն ալ վախցան, և զայրացած մարդէ մը վախցող վատերու պէս՝ քակուեցան ու փախան:

Հայր չ'ունեցող տղան մինակ մնալով, մէկէն ի մէկ միտքը բան մ'իսկած էր. այդ վերջ պիտի տար ատոնց — կուզէի ինքզինք զետը նետել:

Կը յիշէր թէ ութ օր առաջ խեղճուկ մուրացկան մը դրամ չ'ունենալուն համար ինքզինքը գետը նետած էր: Անիկա ջուրէն հանելու ատենին, ինք հոն ներկայ է եղեր. խեղճ մարդուկը որ՝ սովորաբար ողորմելի, աղտոտ, ու ազեղ կ'երևէր իրեն, այդ ատեն անոր հանգարտ զէմը, տոգոյն այտերը, թրջուած երկար մօրուքը և հանդարտ ու բաց աչքերը զինքը ցնցած էին: Ամեն մարդ մէկ մէկ բա՛ն ըսած էր՝ մին՝ «մեռած է»: ուրիշ մը՝ «Հիմա շատ երջանիկ է ան»: — Ու Սիմոն խեղճուկ կ'ուզէր, որովհետև հայր

չ'ունէր, ինչպէս այն թշուառը-դրամ:

Գետափին մօտենալով, ջուրերուն հոսիլը սկսաւ դիտել: Չինքեր կը ցատառուէին յետակ ջրին մէջ, և երբեմն վեր ցատառելով ջրին մակերևոյթը թռչող ճանճերը կ'որսային: Ալ չ'էր լար. զանոնք կը դիտեր, որովհետև անոնց հնարամտութիւնը շատ կը հետաքրքրէր զինք: Բայց, ինչպէս որ փոթորիկը զարկէն վերջ յանկարծ մեծ հով մը կ'իսկէ, ճարճասկ կուտայ ծառերը ու կը կորսուի հորիզոնին մը, երբեմն սա խորհուրդ միտքը կուզար որ իրեն մեծ վիշա կը պատճառէր: — Ինքզինքս գետը պիտի նետեմ, հայրիկ չ'ունիմ որովհետև:

Օդը տաք էր ու պայծառ: Արեւ զարիած էր խոտերուն վրայ, ջուրը հայելիի պէս կը փայլէր: Թուլութիւն մ'ունեցաւ Սիմոն. թուլութիւն մը՝ որ արցունքին կը յաջորդէ ու քանի մը վայրկեան երանութիւն կուտայ մարդու: Այդ երանութեան միջոցին մեծ փափաք կ'զգար քնանալու խոտին վրայ, ջերմութեան մէջ:

Կանաչ պղտիկ դորտ մը ցատեց Սիմոնին ոտքերուն տակէն, որ փորձեց բանել ու չ'կրցաւ: Երբք անգամ ետևէն վազեց, և վերջապէս ետևի ոտքերուն ծայրէն բռնեց ու սկսաւ կենդանիին փախչելու համար ըրած ջանքերուն վրայ խնդալ: Գորտը առ-

ջիկ սրունքներուն վրայ կը կծկուէր, յետոյ մեկէն ի մէկ ցնցուելով կ'երկարէր զանոնք որ պիտի կին ձողի մը նման. աչքերը ու կեղոյն շրջագծով պատած, և առջևի թաթիկներով օդը կը ձեռնէր, կարծես ձեռքեր ըլլային անոնք: Ասիկա, օճապոտոյ կերպով իրարու գամուած նեղ տախտակի կտորներով շինուած խաղաղիկ մը միտքը բերաւ. խաղաղիկ մը, որ միևնոյն ձևով շարժուելով իր այլ փակցուած փայտէ պղտիկ զօրքերուն մարդանքներ ընել կուտար: Տունը, մայրը միտքն ինկաւ այդ ատեն, և արտմելով՝ նորէն լալ սկսաւ: Բոլոր անդամները կը զոզային. ծունկ եկաւ ու սկսաւ աղօթել, ինչպէս սովոր էր աղօթել՝ պակիկէ առաջ: Չ'կրցաւ լնցնել աղօթքը. այնքան սաստիկ կը զոզար որ ամբողջ մարմինը զգայազերկ էր այլ ևս: Ալ չ'էր մտածեր. աչքին բան չ'էր երևար, և միմիայն կուտար:

(Շարունակելի)

Թարգմ. ՎԱՀԷ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

—Տէյլի-Նիւսի Լա-Հէյի թղթա-
կիցը Հոլանտայի Պատգամաւորի մը
հետ տեսակցութիւն մ'ունեցեր է։ Այս
վերջինը ըսած է թէ կը վախճայ որ մի
գուցէ Անգղիան Հոլանտայի գէժ պա-
տերազմ հրատարակէ։

Ձէք կարծեր որ, ըսած է յիշեալ
թերթին թղթակիցը, Անգղիական Կա-
ռավարութիւնը՝ Հոլանտան իրեն մի-
ացնել ուզէ։

—Ո՛չ, պատասխանած է խօսակիցը,
բայց կը գրաւէ ան մեր կալուածները.
և այն օրը որ ժաւան գրաւէ, Հոլանտ-
տան մեռած է այլ ևս։

Հարաւային Աֆրիկէի մէջ Անգղիոյ
գործերը շատ գէշ կ'երթան։ Պէտք-
ներուն չ'պիտի կրնայ յաղթել։ Բայց
մենք ըսւ կը ճանչանք անգղիացիները.
Որչափ որ ձախորդ երթան այնչափ կը
կատարին։ Վերջապէս որ մը վազ պիտի
անցնին Պէտքերէն և մեզի փակ-
չին, քիսանին մեզմէ հանելու համար.
ու այն ժամանակ Գերմանիոյ Կայսրը
չ'պիտի պաշտպանէ զմեզ, գիտե՞ք այդ։

—Պարսից Եւրոպայէն գնած
ինչքերը փոխադրող «Վէրա» նաւը
Կասպից ծովին մէջ փոթորիկի մը հան-
դիպելով, ընկղմեր է, կ'ըսուի։

—Գահիրէէն Ալեքսանդրիա ստոր-
երկրեայ հեռախօսական գծեր պիտի
չինուին, որուն համար Տեղւոյս Պար-
տուց մատուցը 12,500 եգիպտական
ոսկի պիտի տայ։ Գործի պիտի սկս-
ուի յունվար 1ին։

—Տեղւոյս Թրամպլայի ընկերութիւ-
նը Հանրային Գործոց Նախարարու-
թեան ծրագիր մը մատուցած է։ Ըն-
կերութիւնը կուզէ նոր գիծեր շինել
Երկաթուղիին Կայարանէն սկսեալ մին-
չև Պուլքի այն Սահլը (գետեզերք)
ուր վերջերս արմտեայ նոր շուկայ մը
հաստատուած է։

Գիծը Շուպրայի կամուրջէն և հտ-
մանուն պողտապէն և Կառավարական
Վարժապետանոցին առջևն անցնելով
պիտի հասնի մինչև յիշեալ Սահլը։

—Պարտուց Մատուցի Եանձնաժո-
վը մէկ միլիոն ոսկի պիտի տայ Կա-
ռավարութեան, ուսուցումի և հասարա-
կութեան օգտին՝ գործածելու համար։

—Խտիլիալ Մէյլ Վայն շոգենաւ-
ային ընկերութիւնը Անգղիայէն նոր
նաւ մը գնած է։ «Ասիութ» (այս է
նախին անունը) որ քանի մ'օրէն Ա-
լեքսանդրիա պիտի հասնի 35,000 ոսկիի
գնուած է։

—Վերջերս Պուլսոյ մէջ ալ սկս-
ուեր էր պատկերազարդ ֆոթո փո-
քայներու գործածութիւն։ Հիմակ նոր
իրատէ մը ելած է որ թրքական
թղթատան բոլոր պաշտօնեաներուն
կ'արդիւէ զանոք գուրս զրկելու։ Պուլս
թուրք թղթավաճառներուն բով զըտ-
նուած բոլոր պատկերազարդ ֆոթո
քայները գրաւուած են, իսկ օտար-
ներուն բով եղածները՝ գնուած։ Ասկէ
վերջը ո՛վ որ զրկէ մարտատունը պիտի
բանէ։

Ա Ձ Դ

Շատերու կողմէ յայտնուած փա-
փաքի մը գոհացում տալու և մեր
ընթերցողներու գիւրութիւն մը ըն-
ծայելու նպատակով, այսուհետև մեր
թերթը հաստով պիտի ծախուի Շա-
րա Ապու-Էլ-Ալիզի սկիզբը Պ. ԿԱՐԱ-
ՊԵՏ ԵՐԶՆԿԱՑԵԱՆԻ խանութը ինչպէս
նաև Գլխով-Պէյ փողոցի ծայրը և թը-
րամիջիններու կայարանին մօտ ծխա-
վաճառ Պ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՍՊԵԱՆԻ
քով։

Ա Ձ Դ

Կը ծախուի Տ. Կ. Երզնկացեանի խա-
նութը ի Շարա Ապու-Էլ-Ալիզ։

ՕՐԱՑՈՅՑ ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ 1901 ՏԱՐԻՈՑ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ս. ՓՐԿՉԻ Ա.ՉԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ ՊԱՐՁ ԵՒ ԸՆԴԱՐՁԱԿ

ՅՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ ՊԱՏԵՐԱԶԱՐԴ

Երջակայ գիւղերէն եկած յայնձնա-
բարութիւնը փութով կը կատարուին։
Դիմել վերայիշեալ հասցէին։

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միուրիւն».— Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Հիոնի հանրաժանութի գրամատունը,
այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի
գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սոսոյեան,
որ իւր հրապարակային ցոյց տուած
պարկեշտ գործունէութեամբն ամե-
նուս վստահութիւնը կը վայելէ։

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ.
թիւ իրեն յանձնուած և Հիոնի քաղա-
քապետութենէն պաշտօնապէս վա-
ւերացուած փոխանորդարի համա-
ձայն, պիտի կատարէ Պանդ Հիոնիզի
միջոցաւ ամեն տեսակ գրամական և
գուշտի քօնակիցի, վիլ սը Բարիի և
Գաղղիական ամէն արժեթուղթերու
գործողութիւններ, զանձումներ Սոսո-
կան շնչին գումարի մը խնայողու-
թեամբ ձեռք կը բերուի քիչ առնէն,
պահեստի բաժնեթուղթ մը, վիճակա-
հանութեամբ երաշխաւորուած։

Փափաքողները հաճին դիմել Նիւ-
պոսի վրայ փաստաբան Ռարթաքիի
գրասենեակը։

Թղթակցութիւն և կամ գրամ զըբ-
կել հետեւեալ հասցէին։

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ Ի ԳԱՀԻՐԷ

ԱՍՍՄԱՐՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ,
Գաթէ սը լա Պուրի կից, Բ. յարկի,
թիւ 9 գատիկոնը։

Կը բժշկէ բերնի և սկուայի ամեն
տեսակ հիւանդութիւնները։ Աղքատ-
ները ձրի կը դարմանէ ամեն օր, ա-
ռաւօտեան ժամը 8էն 9։

ՊԵՆՏԱՆ-ՅԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ՍՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ՏՈՒՆԱՆՑ

ԵՒ ԶԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳՊՐՈՑ

Ապսիքի մեծ պողոտայից վրայ Տայիւայի
Սանիթի դիմացը, Գալսկին Ելեիքսակ-
գործիներու փակ.տ. ստուեր։

Վերջերս Ամերիկայէն հօս եկած
հաստատուած ըլլալով կը յայտարա-
րենք արդոյ հասարակութեան թէ՛
պատրաստ ենք գոհացնել մեզ զխնդ
Պատ. յանձնարարները, գործի մաք-
րութեան, զիններու չափաւորութեան
և ճշգրտահասութեան կողմէն։

Մեր գործատեղւոյն մէջ կ'աւան-
դուին նաև ձեւադիտութեան դասեր
ամերիկեան ամենավերջին կատարե-
լագործուած մէթոտով։

Մանրամասնութեանց համար դիմել
մեր գործատեղին։

ՃԱՇԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԻ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Շարա Ապու-Սապահ

Նիւս-Տերիլիսի լիեղաւանին դիմացը.

Օգտուն ու զուարճալի դիւր. մա-
քուր ու վայելուչ սպաս. համեղ ու
անգարար կերակուրներու զանազա-
նութիւնն, անխաղախա պատրաստու-
թիւն. ճոխ ճաշայուցակ մը գիւրա-
մատչելի գիներով. ահա՛ Գաղանձ-
եան եղբարց ճաշարանը։

Ո՛վ որ կ'ուզէ, փորձի համար մէկ
անգամ թող դիմէ, վստահ պէտք է
ըլլայ թէ մշտակայ յանձնարողը պիտի
դառնայ հայկական ճաշարանին։


Տ Պ Ա Ր Ա Ն



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՍՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ



ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տ յարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա-
րակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւորման, մահազգեր,
հարսանեաց հրատարակներ, կանոնադրներ, նամակազուլներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն։

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն իմաստով եւ անշահաւոր սպազորութեամբ։

ԶԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ